

ՀԱՅԸ ԵՒ ՌՈՒՍԱԿԱՆ Դ Ա Տ Ա Ր Ա Ն Ը

(—) 0 (—)

(Շար. Ասիա. քիւրեան)

Անցնեմ հիմա այն «յանցանքին», որի համար ինձ մեղադրեալներին նըստարանի վրայ են նստեցրել և որի համար դուք հաւաքել էք ինձ դատելու: Պ. դատախազը իր ճանի մէջ խօսելով ինձ մօտ գտնեալ թուոցիկի մասին. ոչ մի խօսք չստացայ այդ թուոցիկի բովանդակութեան և թէ ինչ առիթով գրեալ լինելու մասին: Երբեք նա ամաչեց խոստովանելու, որ ինքը պահանջում է քսոր ուղարկել այն բանի համար, որ այդ թուոցիկի հեղինակը մերկացնում է միապետութեան պատերազմական արկածախնդրութիւնը, նրա այդ նոր յանցանքը ժողովրդի վերաբերեալ: Բայց միթէ մի շար հեղինակ չէ՞, պ. պ. դատաւարներ. որ Պօրտ-Արտուրի խայտառակ անկումից և ուստաց նաւատորմի ոչնչանալուց յետոյ, Լիւսո-եանկի պարտութիւնից ու Մուկոզէնի ջախջախումից յետոյ, մեղադրել մի մարդու նրա համար միայն որ նա դեռ պատերազմի սկզբում խիստ եւ որոշ կերպով մերկացնում էր այդ յանցաւոր պատերազմի վնասակարութիւնը աշխատաւոր ընդհանրութեան համար, մատնանիչ էր անուժ հայրենիքի այդ նոր դժբախտութեան իսկական յանցաւորի վրայ եւ կոչ էր անում ժողովրդին, բռուն կերպով կոխ մղել այդ անմիտ պատերազմի դէմ: Թուսաստանի Սօցիալ-Դեմոկրատիան, որը միշտ պրօլետարիատի շահերի հակոռդ է ու այդ շահերի անսակէտից է միշտ քննում քաղաքական զէպիքը, պատերազմի հէնց առջին օրից (և դա սօցիալ-դեմոկրատիան, ի ամենամեծ արժանիքներից մէկն է), երբ ժողովրդի միւս խաւերը կամ լըսում էին եւ կամ վախկոտաբար «հայրենասիրական» յուրատուութիւններ էին անում, ազիտացիա սկսեց պատերազմի դէմ եւ հրաւիրում էր պրօլետարիատին խաղաղութիւն պահանջել: Մէկ տարուց աւելի արիւնահեղ կոտորած պէտք եղաւ, հարիւր հազարաւոր մարդկային զոհերով, ամբողջ եր-

կիրը քայքայեց ու աղքատացաւ և մի շարք ամենախայտառակ պարտութիւններ կրեցինք, մինչեւ որ միւս խաւերն էլ զգացին այդ պատերազմի յանցաւոր լինելը և միացան կազմակերպւած պրօլետարիատին պահանջելով որ անմիջապէս վերջ դրուի պատերազմին: Կարծում եմ որ չեմ սըխալւի, եթէ ասեմ, որ հիմա ժողովրդի գիտակից տարրերը, ամբողջ ինտելիգենցիան և ամբողջ լրագրութիւնը միաձայն կառավարութեան են մեղադրում այս անմիտ արկածախնդրութեան և բոլոր կրած սոսկումներին համար: Իսկ չէ գրութիւնն ինչ է պ. պ. դատաւարներ, որ հաւաքել էք դատելու ինձ այն բանի համար, ինչ այժմ պահանջում է ամբողջ ժողովուրդը, որի համար պէտք է մեղադրեալներին նստարանի վրայ նստեցնել ժողովրդի բոլոր զարգացած խաւերին: Եստ ատորօրինակ է ձեր դրութիւնը, այնպէս չէ՞, Բայց աւելի տարօրինակ պիտի լիւայ ձեր դրութիւնը, եթէ աւելի ուղարկութեամբ նայէք մեղադրանքի էութեան վրայ: Թուս. Սօց.—Դէմ.—ի ամենամօտակայ նպատակներից մէկն է՝ կոխ մղել տիրող կառավարչական ռէժիմի դէմ եւ ձգտել ոստիկանա-բուրժուարական միապետութիւնը փոխարինել այն պիտի մի արդար կառավարչական սխալմով որը հիմնւած լինի ժողովրդի իրաւունքների վրայ:

Ահա մեր կուսակցութեան այդ քաղաքական նպատակի համար էք դուք ինձ մեղադրեալների նստարանի վրայ նստեցրել պ. պ. դատաւարներ: Պարոն դատախազը մի առանձին շեշտով էր կարդում թուոցիկի վերջին տողերը, որոնք վերջանում են «կորչի միապետութիւնը» խօսքերով, Բայց հիմա ո՞վ չէ աղաղակում «կորչի միապետութիւնը»: Կա՞յ արդեօք մեր հայրենիքում գէթ մի հատ ազնիւ մարդ, որը չը հասկնար թէ միմիայն միապետութեան ոչնչացումը կարող է մեր ժողովրդին դուրս հանել այն մութ փողոցից, որի մէջ քշել-պցել է բուրժուարատիրայի գիշարիչ քաղաքականութիւնը, և միջոց կը տայ նրան շարունակել իր կուլտուրական զարգացումը: Մտաբերեցէք, թէ ինչպէս վերջերս բժշկները Պիրոզովեան քաղամարդ ժողովում միաձայնու-

թեամբ որոշում էին կայացրել՝ անմիջապէս Օրէնսդիր ժողով հրաւիրել թէ ինչպէս կօնսերվատորիայի սրահը նոյնիսկ Մօսկով. Վեդօմօստի ասելով. թնդաց կորչի միապետութիւնը» աղաղակից: Մտաբերեցէք, թէ ինչեր կատարեցան այս վերջին ամիսներում Թուսաստանի բոլոր քաղաքներում և դուք կը հասկնաք, որ հիմա ամբողջ Թուսաստանը բռնուած է այն բռուն ցանկութեամբ, որ կարելի եղածին չափ շուտով թօթաբուի այդ ժողովրդի օրգանիզմը կրծող, առանց բացառութեան ամենքից առեալ, բարբարոս ռէժիմը, որպէսզի միջոց տալ ժողովրդին ազատ կերպով ստեղծելու մի այնպիսի կառավարական դրութիւն որը աւելի համապատասխան լինի իր պահանջներին: Մենք այժմ գտնուում ենք ահաւոր ու մեծ զէպիքի նախօրեակում: Պետերբուրգի պրօլետարիատի քաղաքում ստքի կանգնելուց յետոյ, ամբողջ Թուսաստանի ընդհանուր յեղափոխական շարժումներից յետոյ, բոլոր բարձրագոյն ուսումնարանների ուսանողներին միահամուռ բողոքի գործադուլից յետոյ, անդադար կրկնուող գիւղական խլրուումներից յետոյ և, վերջապէս այն բոլոր շարժումներից յետոյ, որոնք լուծել են մինչեւ ցարդ, թմրութեան մէջ մնացած կրթւած հասարակութեան զանազան խաւերը այլեւս ոչ ոքի համար գաղտնիք չէ, որ միապետութեան օրերը համարւած են: Մի կամ երկու ամիսց յետոյ յեղափոխութեան ահաւոր հոսանքը պիտի մաքրէ մեր բարբարոս անցեալից մնացած այդ ռէժիմը: Թեւեմն այլեւս ինչ միտք ունի, պ. պ. դատաւարներ, ձեր այս ամբողջ դատավարութիւնը: Այսպիսի ժամանակ երբ ամբողջ երկիրը բռնկւած է յեղափոխութեան հրդեհով, դուք ժողովրդի ծոցից խլուում էք պատահմամբ ձեր ձեռքը իսկաւ մարդին եւ ամենայն լրջութեամբ նրան ուղում էք դատել եթէ դուք հետեւողական լինելով, չէ՞ որ դուք պէտք է դատի ենթարկէք ամբողջ Թուս ժողովրդին: Այդ պարագայում հարց է ծագում թէ, արդեօք ո՞վ պիտի լինէր դատողը եւ ո՞վ դատողը, իսկ մինչ այդ լաւ կը լինի, եթէ դուք մի լաւ մտածէք, թէ ինչ էք ուղում հիմա անել Մեր դատա-

րանի այժմեան ողբերգական դրութիւնը և նրանում է. որ նա կօչւած լինելով պահապան կանգնել մեր բարբարոսական օրէնքներին, նա ոչ չունի ոչ պաշտպանել այդ օրէնքները և ոչ գործադրել նրան. . . Մեր դատարանը հաւատացած չէ, թէ նրա արձակած վճիռները պիտի գործադրեն եւ թէ նրա կատարած բոլոր աշխատանքը ժամանակի իրերը կորուստ չը պիտի դառնայ: Վերցնենք օրինակի համար հէնց իմ գործը. 126 ու 129 յօդուածներն նայելով, որոնց հիման վրայ մեղադրում է ինձ դատախազը, ես պիտի ուղարկուեմ կամ ծը տարով ամառանկիր աշխատանքի եւ կամ ցմահ քսոր: Բայց միթէ ծիծաղելի չէ, պ. պ. դատաւարներ, հիմա այդպիսի դատավճիռների մասին խօսելով, Միթէ ձեզնից ո եւ է մէկը կարող է լրջութեամբ մտածել թէ միապետութիւնը կարող է տեւել ոչ միայն ծը այլ նոյն 1-2 տարի. . . : Ամբողջ Թուսաստանը ետում-խլրում է, այսօր կամ վաղը այլեւս ոչինչ չի մնայ ոչ հին կառավարութիւնից եւ ոչ էլ այս ամբողջ դատախազական վճիռները ու որոշումները անունը կըրող գրեթէ եւ այն մարդիկը, որոնք այսօր ձեր մեղադրեալների նստարանների վրայ են նստած, կը դառնան երիտասարդ Թուսաստանի ամենաեռանդուն գործընկեր մէկը. . . : Համաձայնեցէք, պարոններ, որ արդէն անցել է այն ժամանակը, երբ կարելի էր միամտաբար երազել թէ, ժողովրդի ծոցից դուրս պոկելով մի քանի հատ ազատութեան համար մարտնչողներին, կարելի է կանգնեցնել յեղափոխական շարժումները: Հիմա ամբողջ ժողովուրդն է յեղափոխական դառել, իսկ ժողովրդին մինչեւ օրս դեռ ոչ մի դատարան չէ համարձակել դատելու. . . :

(Շար. Անակիցի) «ՎՊԵՏՕՊ» (Թուս ազատ թերթ)

ՃԻՆԿՈՒՄ ԵՒ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

Ձեր յօդուածները ի հարկէ մեծ իրարանցում ձգեցին հոս. Բիւրօյի եւ Թոստովի վարձկան ծառաները զձեզ վարկաբեկելու համար ամեն ճիգ թա-

Ա. ԱՍՏԻՆԵԱՏՐՈՎ
 Վիկտորիա Պ. Վ. Վ. Վ.
 (Տօնախմբութիւն)
 —) 0 (—
 (Գրագիտի յիշողութիւններից, Ամրան արկածներ քաւական սարօրինակ հասարակութեան մեջ)
 —) 0 (—
 (Թարգմ. ուսուցիչից) 48
 Թ.
 (Շար. Ասիայի քիւրեան)
 —է, ինչ ստեմ, շարունակեց Ա. ֆանասիչը. այդ ամբողջ գործը ինչ տարի առաջ էր: Վիկտորիա Պավլովնան ինձ հետ կենակցեց մօտ երկու ամիս. Յետոյ Արիւնայի միջոցով էր-րամայեց որ այլեւս աչքին չերեւամ: Մի քանի տարի նա ապրեց Պետերբուրգում եւ ուրիշ քաղաքներում:

յետոյ վերաբնակվեց այս տեղ, ուրովհետեւ նրա փական վիճակը խանգարվեց. . . եւ առաջ քան այստեղ տեղափոխվելը ինձ հրաւիրեց նահանգական քաղաքը ոչ թէ ո եւ է վատ նպատակով, այլ իբր հմուտ եւ անձնէր մարդի որպէսզի քաղաքում գտնված իր տունը ծախեմ. բայց մինչեւ այդ օրը ես բոլորովին տեղեկ էի չէի եղած թէ նա յղի է եղել և ծնել է: Ահա բոլորը. այդ օրից արդէն հինգ տարի է անցել: Այդ օրվանից յետոյ ես ոչ մի յարաբերութիւն չեմ ունեցել Վիկտորիայի հետ, եթէ սուտ եմ ասում, Աստուածամայրը թող ինձ խորտակէ: Ես թագնուում եմ նըրանից. . . յանկարծ շար ժամի կը հան դիպեմ, երբ վատ յիշողութիւնները սիրապետել են նրան. կը հրամայէ վաճառել. իսկ Արիւնան էլ ուրախ կը լինի, թափառական շան պէս ինձ վանելու: Ե, ո՞ր կարող եմ գնալ: Այս տեղ ինձ ապրելու անկիւն, հաց են տալիս. իսկ ես ուր գտնեմ մի նոր անկիւն. իմ հին բարեկամներս բոլորն էլ մեռած են, կամ հեռու տեղերում են ապրում. նոր բարե-

բարներ գտնելու համար ես ծեր եմ, յիմար եւ ձանձարալի. . . է զժուար էլ է. նկարագրիս այն չէ: Տես ձեզ հետ էլ երկու շաբաթի չափ պըտըտեցի, բայց տես ինչ մէջ տեղ եկաւ, խայտառակութիւն:
 Ես պահանջում եմ.
 —Ահա, հիմա ո՞վ է Վիկտորիայի սիրեկանը:
 Աչքերը չեց.
 —Աստուած վկայ ոչ ոքի եւ ոչինչ գիտեմ, միթէ մի բան նկատվել է:
 —Ահա երեկ ինչ պատահեց. ու պատմեցի Աֆանասիչին այն սատանայական գիշերը, թէ ինչպէս լճակի մօտ մեզ հետ օյն էր խաղում: Չափազանց հետաքրքրվեց, աչքերը սկսեցին փայլել:
 —Այո, շարունակում է, այդ ճիշդ է, անուշտ տեսակցութեան է գնալիս եղել. ես Վիկտորիային ճանաչում եմ. ամբողջ նրա յանդուգն նըրկարարիւն է. երբ այդ արքաման վիճակի մէջ է լինում, վտանգի եւ մահի հետ է խաղում: Սովորական ժամանակ նրանից բարի մարդ չը կայ ու ձեր տեսած վիճակում նրա-

նից կատարին չըկայ ու աւելի շար է զէպի իր մտերմները:
 Ու այդ պէս Աֆանասիչը շարունակում է Վիկտորիան նկարագրել. ես կատաղած ասում եմ.
 —Ձեզ ամէնքիդ պէտք է սնչացնել, ձեր այդ ամեն աղտոտութիւնների համար. հողուններ, ասա ո՞վ էր երէկ նրա հետ:
 —Թէկուզ սպանեցէք, չը գիտեմ:
 —Ձեզնից յետոյ ո՞վ էր նրա մօտիկ մարդը:
 —Չը գիտեմ,
 —Հապա ի՞նչ, ուրեմն դու առաջինը եւ վերջինը եղա՞ր: Քիզնից յետոյ նա կուսանոց մտաւ:
 —Ոչ ի հարկէ, յետոյ ուրիշներն էլ եղան.
 —Ո՞վ. նրանց մասին եմ ուզում իմանալ:
 —Ես չեմ կարող ինձ թոյլ տալ ասելու. որովհետեւ ոչ մի փաստ չունեմ. միայն չոր կասկածներ են: Եղածները լուել գիտեմ. ես էլ գիտեմ ձեզ մօտ: Մինչեւ այսօր թոյլ գտնվեցի ձեզ մօտ: Մինչեւ այսօր ինչ տարի շարունակ, այդ գաղտնիքը մարդի

փեցին : Վերջապէս հասաւ ափալ թափալ Տիգրանեանը , Ամերիկայի գործիչը , որ այս տարի ձեր բռնած կորովի դիրքին շնորհիւ զրկուեցաւ իրեն համար տարեկան նշանակուած խոշոր սոսիսը , որ պուրկարական նահանգապետի մը սոսիսի կը հասնար :

Այդ պարունին նախագահութեամբ ընդհանուր ժողով մը տեղի ունեցաւ . ես չէի ուզեր երթալ . բայց հասկընալով որ ձեր բռնած դիրքի գէտ խօսքեր պիտի լլլան , գացի : Իրօք մասնաւորապէս ձեզ նիթ ըրաւ . ըսելով՝ Վարդոյի գրածները անհիմն են , սուտ են , անսկզբունք , ու անհետաւալ եւ ոչ մէկ սկզբունք ունեցող . իբր թէ արեւմտեան Բիւրօն խաբուած զձեզ ըրած էր պալքանեան ներկայացուցիչ ու այսօր կզգայ իր խաբուելը : Այս տեսակ դաւաճան մը ինչպէս յեղափոխական մը կը լլլայ . իր գրութիւններովը գոյնը դուրս տուած է . որ մը գրուակեաններու նպատակը , որ մը աննպատակն . զոք խարազանը կը գործածէ մեզ գէտ եւ արդէն , սիրելի ընկերներ , ներքին թողուցիկները ձեզ շատ լաւ պարզած են անոր նկարագրի եւ քարաքաթերի մասին , աղտոտ արարած մըն է :

Ձեր հասցէին այս տեսակ հայտնութիւններ ընելէ վերջը աւելի առաջ գնաց ըսելով : այս դաւաճան մուրացկանը Դաշնակցութեան գըլխուն փորձանք մը եղած է . . . պէտք չէ որ ընկերները այդ ստախոսի գրութիւններուն հաստատն , անոր նստեւելով մեր անաւոր կուսակցութեան մէջ պատակաւ ստեղծեն . ժողովը պրզուած կը ցրուի :

Ահա հետեւեալ օրը վրայ կը հասնի «Շարժում»-ի 727 թիւի «Բացէ քացը Այն տեղ յստակօրէն կը տեսնուի որ միշտ հեռու փախած էք Բիւրօններէն , եւ ձեզ խնդրելով միշտ մէջ քաշած են , Բիւրօններու ծառաներէն առւական առւալիներով լլացած Պ . . . կատարութեան չափը անցած է . Գ . . . սրճարանին մէջը «Շարժում»ը պատառ պատառ կը լլլայ եւ ոտքի տակ կ'անուրի . ու կորոշուի շարժէ շարժի մէկ : «Շարժում» . ետ զրկել ալ . իսկ չէզըններու եկած թերթերը ցրելներէն գողնալ , որպէս զի Ֆիլիպէս չը կարողայ իրենց խախուրթիւնները : Այդ թիւը դեռ

չեկած , փարայի համար միայն դաշնակցական եղած-դեռ միայն քանի մը տարի առաջ դպրոցին պնդիկ վարչապետ Պ . հոս հոն կը պրտաէր ու միամիտները խաբելով կը սէր , ան խաչագող Վարդոյն երկու նամակներ ունի իր ստորագրութեամբը . երբ հասկցաւ թէ ալ ժամանակ հասեր է եւ մենք այդ նամակները հրատարակութեան պիտի տանք , ու իր աղտոտ գործերը հասարակութեան պարզելով գիտցնենք իր ինչ աղտոտ մէկը լլլալը , օգտուելով Պուրկարիոյ մէջ մեր շահերը պաշտպանող թերթիչուններէն , Ամերիկա զրկելը անկարելի է , քանի մը ամիսներու կը կարօտի) սկսեց իր զրպարտիչ գրութիւնները որոնք բողոքովն սուտ եւ անհիմն են :

Այստեղ նոր մարդ մը եկաւ ընտանիքով . ամսոյս 13 ին ժողով մը բրին եւ քանի մը միամիտներ համոզելով փաթիթի ընել տուին պտնանջելով անպատճառ Ֆիլիպէի մէջ թերթ մը հրատարակուի : Դրօշակեան նոր օական մը որով պէտք է մեր շահերը պաշտպանել եւ Վարդոյին դէմ կռիւ մղել . որովհետեւ «Շարժում» զարրած է օական մը ըլլալէ : Նոյնպէս Վարդոյն դադրած է Դրօշակեան մը ըլլալէ , ու անընդունելի է : Բայց թերթը հրատարակելու համար դրամ պէտք է , ու անա վերջին ժողովին մէջ գրամագուրս ալ կը դանուրի . թերեւս այս ձեռն Արեւմտեան բիւրօյէն Պիօնեանի եկած ի նպատակ գործիչ Ռոստոմի զպրօցին հազար ֆրանքի նման : Թերթին առաջին գործը պիտի ըլլայ ձեր երկու նամակները հրատարակել :

Այդ հռչակարար Տիգրանեան կը ճամբորդէ Պուրկարիա եւ Ռուսներու . ձեր սերկացումներուն սպաւորութիւնները ջնջել տալու եւ միամիտները խաբելու համար : Այստեղ լուր տարածած են որ Տիգրանեան շատ հարուստ է . թերեւս ժողովողին հասկըցնելու համար որ ան կազմակերպութեան գրամով չէ որ կապրի :

Ատոնք ձեզի ամեն վրաս կը հասցնեն եւ տրամադիր են հասցնելու , դուք կը խնայէք : Ապահով եղէք որ դուք այստեղ բարեկամներ ունիք . նոյնիսկ ձեր չը կարծած մարդոց մէջ .

որովհետեւ արդարութիւնն է որ կը պաշտպանէք :

Միշտ բարեկամդ

Մ . Ս . — Խնդր՛ , լալկան , բեմերից յեղափոխութեան , տաճկահայաստանի ազատութեան համար արցունքներ թափող Տիգրանեանը , որ բացարձակօրէն Ղազարոսի պէս աղքատ մարդ է . եւ մենք այդ անպատուութիւն չենք համարում , այլ շնորհով ենք որովհետեւ լուրեր են տարածուած թէ շատ հարուստ է . ինչպէս կերելի ժողովողին խաբելու համար , սիրող յեղափոխականների ամենափայլուն ներկայացուցիչներից մին է : Այդ պարունը 10 տարուան մէջ շարունակ ճառերով յեղափոխութեան մասին , ըստ սիրողական սխալմի , մի օր շը ժամանց երթալ այն թուրքիան , որի սահմանը իր պարած վայրից մի քանի քայլ է , եւ որի գէտ Ամերիկայի բեմերից բանաստեղծական ճառեր էր որտուում , իսկ հիմա Բուրգարիայի .

Բայց մի կերպ , ըստ սիրող Դաշնակցականների սխալմի կարողացաւ ինքզինքը եւրոպա նստել իբրեւ յեղափոխական թօշակ ընդունելով , այնտեղից էլ թուա Ամերիկա . որովհետեւ քաղաքակրթված երկիրներ ճամբորդելը շատ է սիրում , չէ՞ որ հիմա յեղափոխութիւնը զիւրին կերպով սիրողներին այդ միջոցները մատակարարում է :

Այսօր այդ պարունը ինձ դէմ դժգոհ լինելու պատճառ ունի եւ մեծ է . ես կեղծական կօծիտէին չը յանձնեցի որոշեալ գումարը . որովհետեւ Ֆիլիպէիցիները ճիշդով այս կողմերը մի գործիչ էր հրաւիրված մի խոշոր սոսիսով , մտաւորապէս չորս հազար ֆրանք . ճամբու ծախքերը հետը , հակառակ Դաշնակցական հիմնական օրէնքի . որի համեմատ ու եւ մարմին իր եկամուտի 100ին 10ը միայն ծախսելու իրաւունք ունի տեղական գործերի համար : Տիգրանեան առաջին թիկնածուն էր այդ սոսիսի . . .

Ինչպէս երեւում է հիմա Տիգրանեանին հարուստ են հռչակում որպէս ի միամիտ Դաշնակցականները մտածեն թէ Տիգրանեան Դաշնակցութեան ձրի է ծառայում . . . Խնդր՛ հայ ժողովուրդը որչափ միամիտ ես .

բաւական է որ ազատ երկիրներում լալով , շարժուածներով խօսեն քո ցաւերի մասին , եւ գու կը հաւատաս : Դեղ խաբել են բարեպաշտ ամիրաները , տէրտէրները , վարդապետները . այսօր էլ խաբում են սիրող յեղափոխականները . . .

Լսում ենք որ Տիգրանեան այստեղ էլ Դաշնակցական գաղտնի ժողովում թէեւ մի քիչ աւելի սանձահարած լեզուով ուզել է մեր գրածները անհիմն հռչակել . . . Տիգրանեան պէտք էր իր պաշտպանութիւնները իմ ներկայութեանը անէր . . . Եւ եթէ ես ստախոս էի իմ դիմակը պատռէր բայց ոչ ետեւիցս . . .

Իսկ գալով իմ երկու նամակներին որոնք հրատարակելով վախեցնում են ինձ . ես անհամբեր սպասում եմ այդ հրատարակութիւններին , վաղուց խնդրել եմ «Դրօշակցից» որ իմ բողոք գրութիւնները հրատարակվեն :

ԱՄՐԹ

ՆԱՄԱԿ ԱՄԵՐԻԿԱՅԻՆ

ՆԷՇՈՒԷ, 15 յուլիս 1905

Ամերիկա գաղթելու հոսանք՝ որ քանի մը ասրիներէ իվեր է սկսած է , ուժգին կերպով կը շարունակուի :

Շարան , շարան , կուգան ու կուգան , բոլորն ալ Հայաստանցի հայ եղբայրներ . ու շարախ շանցներ որ նիւ-Եօրք , Պօսթըն , կամ Գանատա 10-15 հայեր չէլենն :

Հակառակ թուրք կառավարութեան ձեռք առած ամենախիստ միջոցներուն , Հայաստանցի հայը կերպով մը կը յաղդի ինքզինքը արտասահմանի փոխերը նստել , ու կուգայ կը հասնի Ամերիկա . կամ ինչպէս կըսեն այս դատախոսներու երկիրը՝ իր բաղդը օրօնելու համար :

Այս պահուստ որոշ եւ մասնաւոր վիճակագրութիւն մը չունինք մեր ձեռքին տակը ճշգրտու հա-

չեմ տեսլ , նոյն իսկ դաշտի քամուն : Իսկ վիկտորիային բռնելը աւելի դժուար է , միշտ Արիւնայի հետ միասին են . իսկ Արիւնայն ստանալին էլ կը խաբէ :

Ու կրկին աղաչեց .

— Բան չասէք . մի ոչնչացրէք ինձ :

— Ինչի աչք պէս վախենում ես դրանցից , հարցնում եմ ես , եթէ լաւ դատենք նրանք պէտք է քեզինց վախենան , ոչ թէ դու նրանցից , որովհետեւ դու կարող ես տարածել եւ նրանց խայտառակել : Վիկտորիան քեզ բողոքովին անսնել չէ ուզում , դու նրա առջեւ մեղաւորի պէս ստրկանում ես . . .

Պատասխանում է .

— Այո եւ ես մեղաւոր եմ ամբողջ կեանքումս . զարմանում եմ թէ դուք ինչպէս իբրեւ կրթված մարդ եւ ազնիւ այդ չէք հասկանում :

— Բայց դու պնդում ես թէ վիկտորիան քեզ անձնատուր եղաւ իր բարի կամքովը :

— Կամաւոր կամաւորի մէջ տարբերութիւն կայ . միթէ դուք մտածում էք թէ ես այն ժամանակ չէի

հասկանում որ վիկտորիան ինձ զոյգ լինել չէ կարող . ես շատ լաւ գիտէի թէ այդ տեսակ զեղեցիկ ծառեր կարելու կայինք ես չեմ : Եւ եթէ ես ազնիւ եւ մաքուր հոգու տէր մարդ լինէի , նրան փորձանքի չէի բերի , նրա անմտութիւնից չէի օգտուի :

Բայց որովհետեւ այդ միջոցներում ես կատարեալ խոզ էի ու իմ խոզային հմտութեամբ մտեցայ վիկտորիային երբ նա ինքզինքը իշխել չէր կարող . եւ ինչո՞ւ կատարելապէս ի գուր , ազնիւ կեանքը ոչնչացրի եւ ինձ բարեք չարի . Այսինքն այսպէս մի կողմն էր ընկած ուրիշի սեփականութիւնը եւ ես մտնիկից անցնելով տեսայ եւ գողացայ : Եւ ի հարկէ իմ կողմից այդ մեծ ստորնութիւն էր ու զարմանում եմ որ դուք չէք ուզում այդ հանգամանքը ուշադրութեան առնել :

— Դու միշտ այդ տեսակ կարծիքներ ունէիր :

— Ոչ միշտ . այն ժամանակ ի հարկէ , ես շատ գոհ էի ինձնից , մինչեւ անգամ ձեռնաղէկ էր որ այդ տեսակ թագուհուն կարողացայ ինձ մտնիկ-

չնել : Այդ մտքերը վերջը եւկան . . . Այ երբ Ֆիլիպէի մասին լրեսցի . . . երբ ես կալուածքս կորցրի եւ վիկտորիան պատկերեց ինձ կերակրել այս տեղ եւ պարկելու տեղ տալ . անհայտ միջոցին իրօք ես շատ բանի մասին խորհրդածեցի :

— Այնու ամենայնիւ քեզ հետ շատ վատ են վարվում :

— Բայց այդ վիկտորիան չէ . նա այդ մասին բողոքովին չը գիտէ էլ : Այո . . .

Աֆանասիւրը չը լրացրեց խօսքը եւ նայեց ինձ վրա այնպիսի աչքերով որոնց մէջ ես յստակօրէն կարգացի :

— Դու չէ որ լաւ վարվումքի մասին խօսես եւ ես էլ մտնիկ անեմ :

— Ո՞վ է ինձ հետ լաւ վարվել . հացով կերակրում են . անկիւն տալիս են , էլ ի՞նչ կարող եմ սպասել . . . Ինչ երեւելի ծառայութիւններին համար . . . Ոչ , ես նրան հակառակ դնալ երբէք չեմ կարող . այդ տեսակ բան մի ստացէք . ինչ չափ ստոր էլ որ լինեմ , բայց վիկտորիայի հանդէպ ծայրայեղօրէն ստոր չեմ լինի . աւելի լաւ կը խեղդվեմ քան թէ վիկտորիան ի-

մանայ որ իր գաղտնիքը դուրս եմ տուել : Ամենը հին շարութիւններ են շատ հին . ես դրանց մասին յիշել իսկ չեմ համարձակվում . ես մի բան գիտեմ միայն , վիկտորիան իմ բարեարուհին է . պարկելու տեղ եւ հաց է տալիս , չը նայելով որ ինքն էլ հաղիւ ուտելու հաց ունի :

Իսկ ինչ վերաբերում է Արիւնային , հարց է թէ նա է այստեղի տէրը , թէ վիկտորիան . . . Ինչպէս նրանից չը վախնամ , երբ գիտեմ թէ նա ինձ հանդուրժել չէ կարող . եւ միայն վիկտորիայի պաշտպանութեան շնորհիւ է որ ես մնում եմ այս տեղ . . . վրաս չունի եթէ միայն դուրս անեն . . . բայց , ես անկեղծօրէն կասեմ ոչ Աստուծոց եւ ոչ սատանայից եմ այնքան վախենում , որչափ Արիւնայից , որովհետեւ նա անխիղճ է ծնվել եւ մարդ ոչնչացնելը նրա համար չնչին բան է : Ես մեղաւոր մարդս դժոխք չեմ շտապում . . .

(Շարունակելի)



